

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի
ՈՒՂԵԳԾԱՅԻՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

**Սյունիք, Վայոց Ձոր, թանգարան, Ուլգյուր, վիշապ, մ.թ.ա. II-I հազ.,
բնակատեղի, դամբարան**

Ներածություն

ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնը 2013 թվականից իրականացնում է պատմական Սյունիքի բրոնզ-երկաթեդարյան հուշարձանների հնագիտական հետազոտությանը նվիրված ծրագիր, որի նպատակն է ներկայացնել պատմական Սյունիքի (ՀՀ Սյունիքի և Գեղարքունիքի մարզեր, ԼՂՀ Քաշաթաղի շրջանի արևմտյան հատված) հնամշակութային զարգացումների գործընթացը բրոնզի և երկաթի դարերում (Ք.ա. մոտ 3500-500 թթ.), պարզել այդ տարածաշրջանի նշանակությունը տեղական (Արցախ, Ուտիք), տարածաշրջանային (Հայկական լեռնաշխարհ) և վերտարածաշրջանային (Կովկաս, Առաջավոր Ասիա) համատեքստում¹: Հետազոտությունները հիմնվելու են ինչպես պեղումների արդյունքների (Սոթք, Նորաբակ, Կապան, Արվական), այնպես էլ թանգարանային նյութի (Գեղարքունիքի ու Սյունիքի մարզեր) ուսումնասիրության վրա: Միջմասնագիտական աշխատանքը էական նշանակություն կունենա՝ ռազմավարական կարևոր դիրքում գտնվող և բնապաշարներով հարուստ այս գոտու նշակութային ինքնության ակունքները պարզելու համար:

2013 թ. աշնանը ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի արշավախումբը իրականացրեց առաջին հետազոտությունները պատմական Սյունիքի տարածքում, մասնավորապես Վայոց ձորի շրջանում: Այցելություն կատարվեց Եղեգնաձորի երկրագիտական թանգարան և մի շարք հնագիտական հուշարձաններ Եղեգնաձորի շրջակայքում: Սույն հաղորդման նպատակն է նախնական տեղեկություններ շրջանառել կատարված աշխատանքի մասին:

**Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի բրոնզ-երկաթեդարյան
հուշարձանների ուսումնասիրության պատմությունից**

Սյունիքի բրոնզ-երկաթեդարյան հուշարձանների ուսումնասիրությունը սկիզբ է առել դեռևս XIX դարից, թեպետ հիմնականում կրում էր փաստահավաք բնույթ: Ղ. Ալիշանը, մասնավորապես, հիշատակում է Սուլթան քեղեսի ընդարձակ բնակատեղին, որը նա սխալմամբ շփոթում է պատմական Սոգի հետ²: 1898 թ. Գորիսի տա-

¹ Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի 13-6A395, «Պատմական Սյունիքը բրոնզի և երկաթի դարերում (ըստ նորագույն հնագիտական տվյալների)» գիտական թեմայի սահմաններում:

² Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 127: Ուշագրավ է, որ դեռևս 1882 թ. Թիֆլիսի հնագիտական ընկերությունը հայր Ղևոնդ Ալիշանին հեռակա կարգով

րածաշրջանի Տեղ գյուղից ոչ հեռու դամբանաբլուրների պեղումներ է իրականացրել Ա. Ռոսսելը¹: Հետագա տարիներին տարածաշրջանում ուսումնասիրություններ է կատարում Ե. Լալայանը²: Ե. Լալայանը իրավացիորեն նշում է հնագույն ամրոցի առկայությունը Սուլթան քեղեսիում³: Բացի այդ նա դիտարկում է Հերիերի, Շաղատի, Շաքիի դամբարանները, այդ թվում նաև կարասային թաղումները, Հարժիսի ամրոցը և Ջորաց քարերի հուշարձանը, որը հեղինակը ճիշտ մեկնաբանում է որպես դամբանադաշտ⁴: 1920-1930 թթ. մի շարք հրատարակություններում փորձ արվեց կարգավորել սյունիքյան հնագույն նյութը հայաստանյան ընդհանուր նյութի համատեքստում⁵: Սյունիքի մի շարք հնագիտական հուշարձաններին է անդրադառնում նաև Ս. Լիսիցյանը, սակայն առավել հետաքրքիր է նրա կողից Սիսիանի պորտաքարի ուսումնասիրությունը և մեկնաբանությունը պատմական, ծիսական և ազգաբանական տեսանկյունից⁶:

Առաջին կանոնավոր պեղումները տարածաշրջանում իրականացնում է Մ. Հասրաթյանը. Սիսիանի տարածաշրջանում ուսումնասիրելով 1920-1950 թթ. մի շարք կարևոր հուշարձաններ. Ջորաց քարերը, Լորի և Ախլաթյանի դամբարանադաշտերը⁷: Կարևորագույն նշանակություն ունեցան Թուրոս գյուղի դամբարանի պեղումները⁸: Սյունիքի երկաթեդարյան հուշարձանների ուսումնասիրության, տարածաշրջանային կապերի բացահայտման համար մեծ նշանակություն ունեցան Դավիթ Բեկի, Քաջարանի և Շինուհայրի հուշարձանների, ինչպես նաև Հարժիսից հայտնաբերված կուռքի հրապարակումը⁹: Նույն տարիներին պատմական Մոզի տարածքում երկու դամբարան ուսումնասիրեց Հ. Իսրայելյանը¹⁰: Ուշագրավ են Կապան քաղաքի Թեղուտ թաղամասում հայտնաբերված և Կապանի երկրագիտական թանգարանում պահպանվող մ.թ.ա. VII-V դդ. բնորոշ նյութերը, որոնց մի մասը տեղում ուսումնասիրել

ընտրել է Սյունիքի հնություններն ուսումնասիրող հանձնաժողովի անդամ: Տե՛ս Սարգսյան Ս., Ալիշան, Երևան, 1978, էջ 163:

¹ Տե՛ս Լալայան Ե., Ջանգեզուր, «Ազգագրական Հանդես» (այսուհետև «ԱՀ») Դ, Թիֆլիս, 1899, էջ 40:

² Տե՛ս Լալայան Ե., Սիսիան, միթեր ապագայ ուսումնասիրութեան համար, «ԱՀ», Գ. Թիֆլիս, 1898, էջ 105-293, նույնի, Ջանգեզուր, «ԱՀ», Դ, Թիֆլիս, 1899, էջ 7-116, նույնի Շարուր Դարալագեազի գաւառ, «ԱՀ», XII, Թիֆլիս, 1904, էջ 235-293:

³ Տե՛ս Լալայան Ե., Շարուր Դարալագեազի գաւառ, էջ 268:

⁴ Տե՛ս Լալայան Ե., Սիսիան, էջ 168-182, նույնի Շարուր Դարալագեազի գաւառ, էջ 264:

⁵ Տե՛ս Լալայան Ե., Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, Բարխուդարյան Ս., Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1935, Սամվելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ. I, Երևան, 1931:

⁶ Տե՛ս Լիսիցյան Ս., Ջանգեզուրի հայերը, Երևան, 1965:

⁷ Տե՛ս Հասրաթյան Մ., Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985:

⁸ Տե՛ս « 54, 1954, 99-104:

⁹ Տե՛ս Լ. Բարսեղյան, Ուշ բրոնզի մի քանի նորահայտ պաշտամունքային հուշարձաններ, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև «ՊԲՀ»), 1962 N 3, 258-260, , « » . 1962 N 3, 187-200, , 1964, 148:

¹⁰ Տե՛ս Xnkikyan O.S. Syunik during the Bronze and Iron Ages, Barrington, 2002, p. 10:

է Ռ. Թորոսյանը¹: 1972 թ. հրապարակվեց Սյունիքի վաղ հուշարձաններին նվիրված առաջին ամփոփ հոդվածը, որտեղ ի մի էին բերված այդ տարածաշրջանին առնչվող բոլոր հայտնի նյութերը²:

Ձուգահեռաբար ընթանում էր նաև թանգարանային նյութի սիստեմավորումը և հրատարակումը: Յ. Մարտիրոսյանի հրատարակեց Գորիսի երկրագիտական թանգարանում պահպանվող Լցենի դամբարանի նյութերը³ և Սիսիանի, Գորիսի ու Կապանի երկրագիտական թանգարաններում պահպանվող հնագույն քանդակի նմուշները, մասնավորապես Կապանի տարածաշրջանի Ազնակ գյուղից ոչ հեռու գտնվող ուրարտական տեսքի առյուծի արձանիկը⁴: Վայոց Ձորի և Սյունիքի հուշարձանները հիշատակվում են նաև Լ. Ազարյանի, Ս. Բարխուդարյանի, Յ. Եղիազարյանի, Վ. Խաչատուրյանի, Օ. Խնկիկյանի, Ա. Շահինյանի, Յ. Պետրոսյանի, Պ. Մուրադյանի աշխատանքներում⁵:

Կարևոր նշանակություն ունեցավ Սյունիքի ուրարտական արձանագրությունների վերծանությունը և մեկնաբանությունը⁶:

Հետագայում, հատկապես 1970-2000-ական թթ., Սյունիքում աշխատանքներ է իրականացրել Օ. Խնկիկյանը, որի մեծագրությունը Սյունիքի հնագիտությանը նվիրված առ այսօր ամենամամփոփ աշխատությունն է: Նրա հետազոտությունները ներառում են Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի գրեթե բոլոր շրջանները, այդ թվում այնպիսի հանգուցային հուշարձաններ, ինչպիսիք են Սիսիանի, Ձորաց Քարերի, Խնածախի, Շիկարողի, Շվանիձորի, ճոճ Տարի դամբարանադաշտերը: 1980 թթ. ճոճ Տարում հետազոտություններ է կատարել նաև Վ. Հովհաննիսյանը⁷: Օ. Խնկիկյանի հետազոտության առարկա են դարձել տարածաշրջանի հնագույն բնակավայրերը. Ելփին,

¹ Տես Ս. Եսայան, Ձանգեգուրի վաղ հնագիտական հուշարձանները, «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ») 1972, N 4, էջ 70-73:

² Տես Ս. Եսայան, նշվ. աշխ., էջ 64-73:

³ Տես Ա. Ա. Мартиросян, նշվ. աշխ., էջ 151-153:

⁴ Տես Ս. Եսայան, նշվ. աշխ., , , , 1981, . 51-61:

⁵ Տես Ազարյան Լ., Հայկական խաչքարները, Սբ. Էջմիածին, 1973, Բարխուդարյան Ա.Գ., Վայոց Ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, Դիվան հայ վիճագրության, պր. 3, Երևան, 1967, Եղիազարյան Յ., Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1955, Խաչատուրյան Վ., Դիտողություններ հայ արվեստի հիմունքների մասին, «ԼՀԳ», 1982, N10, էջ 76-85, Խնկիկյան Օ.Ս. Ցլազուլիս կոթողներ Վարդենիսի լեռներից և «Վիշապաքարերի» մեկնության հարցի շուրջ, «ԼՀԳ», 1997, N 3, էջ 148-159, Շահինյան Ա. Վայոց Ձորի վիշապ-կոթողները, «ՊԲՀ», 1976, N1, էջ 286-289, Շահինյան Ա., Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, Երևան, 1984, Պետրոսյան Յ.Լ., Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, Мурадян П.М., Обращенные в чачкары вишапы-стелы из Егегнадзора. Художественные памятники и проблемы культуры Востока (под ред. В.Г. Лукониной), Ленинград, 1985, с. 20-26:

⁶ Տես Գայսեդյան Վ., Արգիշթե II-ի Սիսիանի արձանագրությունը, «ԼՀԳ», 1985, N 6, էջ 67-79, Օ. Գ. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, N. Harouthiounian. La nouvelle inscription Ourarteenne decouverte en Armenie Sovetique. Gesellschaft und Kultur im alten Vorderasien. Berlin, 1982, 82-85:

⁷ Վ. Հովհաննիսյանի պեղումների հաշվետվությունը պահվում է Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում:

Տեղ, Հարժիս¹: Նրա հետազոտությունների համատեքստում պետք է նշել Եղեգնաձորի ուրարտական հուշարձանների հրատարակումը և մանրամասն մեկնաբանությունը²: Առանձին հետազոտություններ Գորիսի տարածաշրջանի Տաթև գյուղում կատարել է Վ. Ավետյանը³: Նա հետազոտել է նաև ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանի մի քանի դամբարան Վահանավանքի շրջակայքում⁴:

Կարևոր նշանակություն ունեցավ Սյունիքի հնագույն արվեստի ուսումնասիրությունը⁵:

Եական էր Սյունիքի մետաղական հանքերի ուսումնասիրությունը, պղնձահանքերի այդ խոշոր ավազանի հնագույն օգտագործման արժևորումը⁶: Վերջին տարիներին Սյունիքում իրականացվում են ինչպես ուղեգծային արշավներ, որոնք նպատակ ունեն հաստատագրել հուշարձանները, այնպես էլ կատարել կանոնավոր պեղումներ: Ուղեգծային արշավների թվում պետք է մասնավորապես հիշատակել Ս. Քրոլի⁷, Պատմա-մշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի և ԵՊՀ-ի արշավախմբի հետազոտությունները⁸:

Կանոնավոր պեղումների շարքում պետք է նշել Գողթնորի բազմաշերտ հուշարձանի⁹, Սիսիանի փարձակայանի դամբանադաշտի¹⁰, Ելփիմի ուրարտական ամրոցի¹¹ և Շաղատի միջին բրոնզեդարյան բնակատեղիի պեղումները¹²:

1 Տե՛ս Xnkikyan O.S., նշվ. աշխ:

2 Տե՛ս С. Есаян, О. Хнхикян. Находки урартских предметов в Ехегадзоре «Բանբեր Երևանի Համալսարանի», 1990, N 3, էջ 34-44:

3 Տե՛ս Ավետյան Վ., Հին հուշարձաններ Տաթև գյուղի տարածքում, «ՊԲՀ», 2001, N 3, էջ 259-264:

4 Տե՛ս Գրիգորյան Գր., Վահանավանք, Երևան, 2007, էջ 78, աղ. XXII:

5 Տե՛ս Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Երևան, 1970:

6 Տե՛ս . . . , . . . , 1980, . 30-32:

7 Տե՛ս Kroll St. Southern Armenia Survey (Syunik) 2000-2003, «Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies», (then-«Aramazd») 2006, N 1, p. 19-49:

8 Տե՛ս Ի. Ղարիբյան, Հ. Սիմոնյան, Ա. Գնունի, Է. Այվազյան, Է. Քանալյան, Գ. Խաչատրյան, Սյունիքյան նորահայտումներ, «Հուշարձան», Է, Երևան, 2011, էջ 129-142:

9 Տե՛ս Avetisyan P., Badalyan R., Gevorkyan A., Khnkikyan O., The 1998 Excavations Campaign at the Middle Bronze Age Necropolis of Sisian, Armenia, «Studi Micenei ed Egeo-Anatolici», 2000, N 42/2,, p. 161-173. P. Avetisyan, Ch. Chatainger, G. Palumbi., The Results of excavations of Nerkin Godedzor (2005-2006). Preliminary Report, «Aramazd», 2006, N 1, p. 6-18, Cherry J., Manning S., Alcock S., Tonikyan A., Zardaryan M., Radiocarbon Dates for the Second and First Millennia BC from Southern Armenia: Preliminary Results from the Vorotan Project, 2005-2006, «Aramazd», 2007, N 2, p 52-71:

10 Տե՛ս Պ. Ավետիսյան, Հայաստանի միջին բրոնզի ժամանակագրությունը և փուլաբաժանումը, թեկն. ատեն. սեղմագիր, Երևան, 2003, Ա. Քալանթարյան, Հ. Մելքոնյան, Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ. Երևան, 2005, էջ 70-72:

11 Տե՛ս Melkonyan H., Karapetyan I., Yengibaryan N. The Excavations of the Newly found Urartian Fortress in Getap, «Aramazd», 2010, 5/2, p. 90-98:

12 Տե՛ս Ա. Մելքոնյան, 2005-2006 Շաղատ I և III հուշարձանախմբի միջին բրոնզեդարյան բնակատեղիի պեղումների արդյունքներից, Հին Հայաստանի մշակույթը, պր. XIV, Երևան 2010, էջ, 149-154:

Մեր նպատակն է ընդհանրացնել առկա տվյալները և լրացնելով դրանք նորերով՝ պատմամշակութային ընդհանուր համատեքստում դիտարկել Սյունիքի հնամշակութային զարգացումները:

Դաշտային հետախուզական աշխատանք

Հետախուզական արշավներ իրականացրեցինք հիմնականում չորս ուղղությամբ.

1. Ելփինի դամբարանադաշտը ձգվում է Երևան-Եղեգնաձոր ճանապարհի աջ և ձախ կողմերում (կորդինատներն են՝ N 39.80970՝, E 045.06790՝, 1742 մ): Ճանապարհաշինության ժամանակ ավերվել են մի շարք դամբարաններ, ինչն էլ հիմք հանդիսացավ դամբարանադաշտը հայտնաբերելու համար (Նկ. 1,2): Դատելով ավերված հատվածից՝ դամբարանային կառույցները ներկայացված են փոքր չափի քարերից կազմված զրահ ունեցող դամբարանաբլուրներով: Մակերեսին երևում են կրոնլեխների հետքեր, ցրված են վանակատե արտեֆակտներ (Նկ. 13 (9)): Տարածքը յուրացված էր նաև միջնադարում, ինչի մասին վկայում է XII-XIII դդ. բնորոշ վերգետնյա խեցեղեն նյութը: Այս հուշարձանը նոր է, բացակայում է Հուշարձանների պետական ցուցակում:

2. Արշավախումբը այցելեց ճոչ Տար դամբարանադաշտը և տեղայնացրեց Վ. Հովհաննիսյանի պեղած դամբարանները (կորդինատներն են՝ N 39.759110՝, E 045.34100՝, 1286 մ): Դրանք ներկայացնում են հիմնականում փոքր հողաթմբով և մեծ քարերով շրջապատված քարարկղեր (Նկ. 3,4): Ծածկը հարթ է կամ կեղծ թաղի տեսքով: Այս տարածքում անշուշտ հին բնակավայր է եղել, ինչի մասին են վկայում առկա պատերի հետքերը: Վերգետնյա խեցեղեն նյութը բնորոշ է մ.թ.ա. II-I հազ., սակայն տարածքը բնակեցված է եղել նաև միջնադարում (Նկ. 13 (4-8)): Այս հնավայրի անունը բացակայում է Հուշարձանների պետական ցուցակում:

3. Հաջորդ նորահայտ հուշարձանը գտնվում է Աղավնաձոր գյուղում, որը ներկայացնում է ժայռափոր մի խորշ՝ տեղադրված բլուրի զառիվայր ժայռային հատվածի վերնամասում, ինչը տիպիկ է ուրարտական դարաշրջանին (կորդինատներն են՝ N 39.79377՝, E 045.23003՝, 1573 մ): Խորշն ունի ոչ կանոնավոր քառակուսու տեսք՝ հյուսիսային կողմում կլորացված, բոլոր կողմերից լավ մշակված, վերնամասում երևում են կրակի ներգործության հետքեր (Նկ. 5,6): Խորշը բացակայում է Հուշարձանների պետական ցուցակում:

4. Հետազոտության հաջորդ թիրախը Աղավնաձորից վեր գտնվող Ուլգյուրի պատմական գոտին է, ուր մենք այցելեցինք տեղի բրոնզ-երկաթեդարյան իրավիճակը պարզելու համար: Այստեղ ծովի մակերևույթից մոտ 2000 մ բարձրության վրա, մինյանցից մոտ 3 կմ հեռավորությամբ գտնվում են Ներքին Ուլգյուրի (Աղավնաձոր գյուղի վարչական տարածք) և Վերին Ուլգյուրի (Ռինդ գյուղի վարչական տարածք) պատմական գոտիները, որոնք միջնադարյան հայտնի բնակավայրեր են եղել իրենց կրոնական և աշխարհիկ շինություններով, որոնց մի զգալի մասը պահպանվել է այստեղ: Այն, որ այս պատմական տարածքը բնակեցված կարող էր լինել նաև բրոնզի և երկաթի դարերում, վկայում են ոչ միայն որոշ կառույցների շարվածքի

առանձնահատկությունները և մ.թ.ա. I հազ. կեսին բնորոշ խեցեղենը՝ հավաքված հատկապես Վերին Ուլգյուրի հատվածում (կորդինատներն են՝ N 39.81460, E 045.19991, 1920 մ), (նկ. 12, 13 (1-3), այլև վիշապաքարերը: Վիշապաքարերից երկուսը՝ Ուլգյուր 1 և 2 (նկ. 7, 8), նախկինում հայտնի են, մյուս երկուսը՝ Ռինդ 1 և 2 որպես այդպիսին ներկայացվում են առաջին անգամ (նկ. 9,10): Խոսքը վերաբերում է միջնադարում խաչքարացված վիշապաքարերի մասին, որոնք մասամբ տեղափոխվել են իրենց նախնական վայրերից¹: Այստեղ նշենք, որ մենք հետազոտեցինք նաև Եղեգնաձորի Մոմիկի անվան այգու վիշապաքարը (նկ. 11), պարզեցինք նրա տեղափոխման մանրամասները: Ստորև բերում ենք այդ վիշապաքարերի նկարագրությունը:

Ուլգյուր 1: Տիպը՝ ցլակերպ; Նյութը՝ մոխրա-շականակագույն բազալտ պահպանվածությունը՝ լավ, խաչքարացված և արձանագրված դիմային ու կողային հատվածներում (ետնամասում՝ միայն փոքրիկ խաչ է, արևելյան կողային մասում կա նոր արված մարդապատկեր): Չափերը՝ 353x93x40 սմ: Սկզբնավայրը՝ անհայտ; Բարձրությունը ծովի մակերևույթից 1950 մ: Համատեքստը՝ անհայտ: Երկրորդական օգտագործումը. ըստ արձանագրության՝ 1009 թ. պատվիրատու Սարգիս Երեցի կողմից վերածվել է խաչքարի, կոչվել է Ս. Աստվածածին անունով; Ներկայիս վայրը՝ Աղավնաձոր գյուղի վարչական տարածք, Ներքին Ուլգյուր կամ Վանքի դուզ/ձոր գյուղատեղիի հարավ-արևմտյան հատված, Ս. Աստվածածին եկեղեցու հարավային կողմում: Այս կոթողը առաջինը նկարագրել է Զ. Եղիազարյանը՝ նշելով, որ այն «կոթողաձև» է²: Ս. Բարխուդարյանը ակնարկում է, որ նա «հին կոթողի տեսք ունի»³: Ա. Շահինյանը առաջինն էր, որ անվանել է վիշապաքար, սահմանվել է Ա. Շահինյանի կողմից⁴, իսկ Վ. Խաչատուրյանը, Լ. Ազարյանը, Պ. Մուրադյանը և Զ. Պետրոսյանը այն ներկայացնում են որպես խաչքար⁵: Հուշարձանների պետական ցուցակում սույն կոթողը ներկայացված է որպես խաչքար, նախնական նշանակությամբ՝ ցլակերպ վիշապ⁶:

Ուլգյուր 2: Տիպը՝ ցլակերպ; Նյութը՝ մոխրա-շականակագույն բազալտ: Պահպանվածությունը՝ լավ, խաչքարացված՝ դիմային, արձանագրված՝ կողային ու ետևի հատվածներում: Չափերը՝ 250x80x49 սմ, սկզբնավայրը՝ անհայտ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1950 մ, համատեքստը՝ անհայտ: Երկրորդական օգտագործումը. ըստ արձանագրության՝ Պ. Մուրադյանի ընթերցման՝ քարը ներկայիս տեղն է բերվել Որկոր վայրից և վերածվել խաչքարի վարպետ Մարգարի կողմից իր ծնողների՝ հոր՝

¹ Ինչպես Ռինդի, այնպես էլ Աղավնաձորի վիշապ-խաչքարերը, ամենայն հավանականությամբ նշված վայր տեղափոխվել են համեմատաբար վերջերս, քանի որ դեռևս 1904 թ. Ուլգյուրի տարածքը հետազոտող և մատուռը նկարագրող Ե. Լալայանը չի հիշատակում դրանք: Տե՛ս Լալայան, Շարուր-Ղարալազյազ, էջ 184:

² Տե՛ս Զ. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 78:

³ Տե՛ս Ս. Բարխուդարյան, Վայոց ձոր, էջ 34, նկ. 21:

⁴ Տե՛ս Շահինյան Ա., Վայոց ձորի վիշապ-կոթողները, էջ 287-288, նկ. 1, նույնի՝ Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, էջ 28, նկ. 3:

⁵ Տե՛ս Խաչատուրյան Վ., նշվ. աշխ., էջ 80, Զ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 436, նկ. 73, . . . , նշվ. աշխ., էջ 23-24, Ազարյան Լ., Հայկական խաչքարները, նկ. 18-19:

⁶ Տե՛ս Հուշարձանների պետական ցուցակ, Վայոց ձոր, Աղավնաձոր 9.6.3.2.:

իշխան Սմբատի և մոր Սեթիի հիշատակին: Արձանագրությունը թվագրվում է 1199 թ., սակայն վիշապաքարը խաչքարացվել է արձանագրությունից ավելի վաղ՝ Ուլգյուր 1-ի հետ միաժամանակ, 1009 թ.¹: Ներկայումս կոթողը գտնվում է Աղավնաձոր գյուղի վարչական տարածքում, Ներքին Ուլգյուր կամ Վանքի դուզ գյուղատեղիի հարավ-արևմտյան հատվածում, Ս. Աստվածածին եկեղեցու հարավային կողմում²: Առաջինը որպես կոթողային հուշարձան հիշատակում է Յ. Եղիազարյանը 1955, 78, որպես «կոթողաձև»³: Շահինյանը այն բնորոշում է որպես վիշապաքար⁴: Հուշարձանների պետական ցուցակում ներկայացված է որպես խաչքար, նախնական նշանակությամբ՝ ցլակերպ վիշապ⁵:

Ռինդ 1: Տիպը՝ ցլակերպ, ինչի մասին վկայում են կորացող ձևը, հաստությունը և գլխին պահպանված կատարը: Նյութը՝ մուգ մոխրագույն բազալտ, սպիտակ և կարմիր քարաքոսի հետքերով: Պահպանվել է կոթողի միայն կեսը. դիմային մասը հարթեցվել է և վրան մեծ ու փոքր խաչեր արվել: Հափերը՝ 187x101x39 սմ: Սկզբնավայրը անհայտ է: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1941 մ, համատեքստը՝ նույնպես անհայտ: Երկրորդական օգտագործումը՝ խաչքար, ներկայիս վայրը՝ Ռինդ գյուղի վարչական տարածք, Վերին Ուլգյուր գյուղատեղի, 10-14-րդ դդ. գերեզմանոցի և 13-14 -րդ ու 17-րդ դդ. խաչքարերի համատեքստում: Թեպետ այս կոթողն առաջին անգամ է հրապարակվում, սակայն Ռինդի խաչքարացված ցլակերպ վիշապաքարերի մասին հիշատակել է դեռ Յ. Մելքոնյանը⁶:

Ռինդ 2: Տիպը՝ ցլակերպ, ինչի մասին վկայում են նեղացող ձևը, հաստությունը և գլխին պահպանված կատարը: Նյութը՝ բաց մոխրագույն բազալտ, սպիտակ և կարմիր քարաքոսի հետքերով: Պահպանվածությունը՝ դիմային մասը վերամշակված, հարթեցված, ինչի պատճառով պատկերները անտեսանելի են, արևելյան կողմային մասում մասամբ կտրված, չափերը՝ 198x70x29 սմ, սկզբնավայրը անհայտ է: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1941 մ., համատեքստը՝ նույնպես անհայտ է: Երկրորդական օգտագործումը՝ թերևս հունք է հանդիսացել խաչքար պատրաստելու համար, ինչը տեղի չի ունեցել. ներկայումս օգտագործվում է իբրև սեղան: Գլխամասում կա անցք՝ քարշ տալու համար: Երկու կողմային մասերում մնացել են կլորավուն փոսիկների հետքեր: Ներկայիս վայրը՝ Ռինդ գյուղի վարչական տարածք, Վերին Ուլգյուր գյուղատեղի, 10-14-րդ դդ. գերեզմանոցի և 13-14-րդ ու 17-րդ դդ. խաչքարերի համատեքստում, Ռինդ 1-ից 10 մ դեպի հարավ: Այս կոթողը ևս առաջին անգամ է հրապարակվում:

¹ Տե՛ս . . . , նշվ. աշխ., էջ 23-24:

² Տե՛ս Խաչատուրյան Վ., նշվ. աշխ., էջ 80, Յ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 436, նկ. 73:

³ Տե՛ս Յ. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 78, Ս. Բարխուդարյան, Վայոց ձոր, էջ 35, նկ. 21:

⁴ Տե՛ս Շահինյան Ա., Վայոց ձորի վիշապ-կոթողները, էջ 288-289, նկ. 1,3:

⁵ Տե՛ս Հուշարձանների պետական ցուցակ՝ Վայոց ձոր, Աղավնաձոր 9.6.3.2.2:

⁶ Հմմտ՝ Օ. Մուկիկյան, նշվ. աշխ., էջ 124: Այս կոթողները հիշատակվում են նաև Յ. Եղիազարյանի և Ս. Բարխուդարյանի կողմից: Տե՛ս Յ. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 79-80, Ս. Բարխուդարյան, Վայոց ձոր, էջ 34: Տե՛ս նաև Հուշարձանների պետական ցուցակ, Վայոց ձոր, Ռինդ 9.37.4:

Սելիմ 1: Տիպը՝ ցլակերպ, նյութը՝ մոխրագույն բազալտ, պահպանվածությունը՝ մաշված, չափերը՝ 270x110x35 սմ, սկզբնավայրը՝ Սելիմի լեռնանցքի շրջակայքը, համատեքստը՝ անհայտ: Ներկայիս վայրը. կոթողը 1984 թ. հոկտեմբերին Գլածորի համալսարանի տոնակատարության օրերին տեղափոխվում է Եղեգնաձոր և դրվում Մոմիկի անվան հասարակական այգում: Երկրորդական օգտագործումը. կանգնեցված որպես հուշարձան քաղաքային այգում¹:

Վիշապաքարերը բրոնզեդարյան երևույթ են, ամենայն հավանականությամբ վերաբերում են Ք.ա. II հազարամյակին (միջին և ուշ բրոնզի դարեր): Պատմական Սյունիքը հանդիսանում է վիշապաքարերի տարածման հիմնական կենտրոններից մեկը (հատկապես՝ Գեղամա լեռները), ինչը խոսում է Սյունիքի բացառիկ դերի մասին Հայկական լեռնաշխարհի հնամշակութային գործընթացներում:

Աշխատանքներ Եղեգնաձորի թանգարանում

Եղեգնաձորի երկրագիտական թանգարանն ունի բավականին հարուստ հնագիտական և ազգագրական հավաքածու (մոտ 8000 ցուցանմուշ): Հնագիտական հավաքածուն բաղկացած է ինչպես պատահական գտածոներից, այնպես էլ կանոնավոր պեղումների հավաքածուներից, որոնք վերաբերում են հիմնականում Մոզ, Ելփին, Գետափ, ճոչ տար, Ս. Սպիտակավոր, Շատին և այլ հնավայրերին: Թանգարանային նյութը ժամանակագրորեն ընդգրկում է ողջ բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանը:

Առավել վաղ թվագրում ունեն Մոխրոտ բնակավայրից հայտնաբերված իրերը: Օ. Խնկիկյանի կողմից հետազոտված այս բնակավայրի պեղումների նյութերը բնորոշ են վաղ բրոնզի դարին²: Թանգարանում պահպանվող իրերը ներկայացված են սև փայլեցված գավերի բեկորներով (Եղեգնաձորի երկրագիտական թանգարան (այսուհետև ԵԵԹ) ի/հ 1294/3747, 3738, 3744, 3746):

Տարածաշրջանի միջին բրոնզի դարաշրջանի հուշարձանները ներկայացված են Մոզի դամբարանների պեղումների և Ելփինից հայտնաբերված նյութերով: Մոզի 1 և 2 դամբարանների նյութը բնորոշ է մ.թ.ա. XXII-XIX դդ.³: Նույն ժամանակաշրջանին են բնորոշ Շատինից հայտնաբերված նյութերը⁴: Գյուղի տարածքից և շրջակայքից հայտնաբերված նյութերը ներկայացված են կոպիտ ձեռածեփ գավերով և թասերով, քարե գործիքներով (ԵԵԹ 581/938, 1113/1670, 1668, 1674): Միջին բրոնզի հաջորդ փուլին՝ մ.թ.ա. XIX դարի երկրորդ քառորդին են բնորոշ Ելփինից հայտնաբերված գունազարդ թասերը (ԵԵԹ ի/հ 1251/3372, 3373, 23/28): Առանձնապես հետաքրքիր է թռչնազարդ թասը (ԵԵԹ 23/28):

¹ Տես Խնկիկյան Օ.Ս., Ցլագուխ կոթողներ Վարդենիսի լեռներից և վիշապաքարերի մեկնության հարցի շուրջ, «ԼՀԳ», 1997, N3, էջ 148, Օ. Xnkikyan, նշվ. աշխ., աղ. XCVIII/1, Հուշարձանների պետական ցուցակ, Վայոց ձոր, Եղեգնաձոր 9.1.14:

² Տես Օ. Xnkikyan, նշվ. աշխ., էջ 20 աղ. III:

³ Տես Օ. Xnkikyan, նշվ. աշխ., էջ 23-24, աղ. III-IV, Պ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 19:

⁴ Տես Օ. Xnkikyan, նշվ. աշխ., էջ 25:

Մ.թ.ա. II-ի հազ. սկզբին բնորոշ խեցեղենը հայտնի է Ելփինից, Շատինից, ճոճ Տարից և Մոզից: Հատկապես պետք է նշել թանգարանում պահպանվող ծորակավոր անոթները, որոնք ներկայացված են կարճ գլանաձև (ԵԵԹ 1324/5551՝ Մոզ և 1321/5214՝ ճոճ Տարի հ. 23 դամբարան)¹ և կտցաձև կիսախողովակաձև ծորակով (ԵԵԹ 1324/5567՝ Մոզ²: Եղեգնաձորի երկաթեդարյան ժամանակաշրջանի հավաքածուում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում կենդանակերպ անոթները, որոնք ներկայացված են խոյակերպ բռնակով շերեփով (ԵԵԹ 1287/3679) Մոզից³ և Արենիից հայտնաբերված կենդանակերպ անոթով: Վերջինիս պատկերը խիստ բնապաշտական է, սակայն զարդամոտիվները գրեթե բացակայում են: Անոթի փողը գտնվում է կենդանու գլխամասում: Բացի այդ, քթի և աչքերի հատվածում գայլիկոնված անցքեր են (նկ. 14): Նույն դամբարանից է գտնվել սապատավոր կանթով գավաթը (նկ. 15):

Մ.թ.ա. I հազ. ուսումնասիրվող տարածաշրջանը ներառվում է Վանի թագավորության սահմաններում: Այս մասին են վկայում ոչ միայն Գետափի ամրոցի պեղումները⁴, այլև Եղեգնաձորի ուրարտական դամբարանի հավաքածուն⁵ և ճոճ տարի դամբարանների հավաքածուն (Վ. Հովհաննիսյանի պեղումները 1980-ական թթ.): Ուրարտական նյութ հայտնի է նաև Ելփինից (ԵԵԹ ի/հ 1386/6580,6581):

Եզրակացություն

2013 թ. աշնանը ԵՊՀ-ի հնագիտության և ազգագրության ամբիոնի իրականացրած գիտարշավի արդյունքում հետազոտվեց Եղեգնաձորի թանգարանի նյութը, հայտնաբերվեցին նոր հուշարձաններ (Ելփինի դամբարանադաշտը, Աղավնաձորի ուրարտական խորշը, Ռինդ 1, 2 վիշապաքարերը): Արված հետազոտությունները բացահայտում են այն էական ներուժը, որ ունի Վայոց ձորը և ընդհանրապես պատմական Սյունիքը Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան հնությունների ուսումնասիրության տեսանկյունից:

Շնորհակալական

Հեղինակները իրենց խորին շնորհակալությունն են հայտնում Եղեգնաձորի երկրագիտական թանգարանի տնօրեն Կանո Սահակյանին և թանգարանի աշխատակիցներին համակողմանի աջակցության համար, ինչպես նաև Հուսիկ Մելքոնյանին և Բորիս Գասպարյանին քննարկումների և խորհուրդների համար:

¹ Տես Օ. Մոսկոյան, նշվ. աշխ., աղ. LXII/30:

² Տես Օ. Մոսկոյան, նշվ. աշխ., աղ. LIX/18:

³ Տես Օ. Մոսկոյան, նշվ. աշխ., աղ. LXIII/1Է:

⁴ Տես Melkonyan H., Karapetyan I., Yengibaryan N. 2010, The Excavations of the Newly found Urartian Fortress in Getap, «Aramazd», 2010, vol V is. 2, p. 92:

⁵ Տես Օ. Մոսկոյան, նշվ. աշխ., աղ. XCIV-XCVI:

Նկարներ



Նկ. 1, 2 – Ելփինի դամբարանադաշտը



Նկ. 3, 4 – Դամբարան ճոճ Տարի տարածքում



Նկ. 5. ա



Նկ. 5. ա, բ, 6 ա, բ – Աղավնածորի ժայռափոր խորշը

Նկ. 7, 8 – Ուլգյուր 1-2 վիշապաքարերը



Նկ. 9 – Ռինդ 1 վիշապաքարը



Նկ. 10 – Ռինդ 2 վիշապաքարը



Նկ. 11 – Եղեգնաձորի վիշապաքար



Նկ. 12 – Ուլգյուրի բնակավայրի շինարարական մնացորդները



Նկ. 13, 14, 15 – Հուշարձաններում հայտնաբերված հնագիտական նյութը



Նկ. 15. – Արենիից հայտնաբերված արջակերպ անոթը և գազաթը (ԵԵԹ ֆոնդեր)

Օգտագործված գրականություն

1. **Ալիշան Ղ.**, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վանետիկ 1893
2. **Ազարյան Լ.** 1973, Հայկական խաչքարները, Սբ. Էջմիածին:
3. **Ավետիսյան Պ.**, 2003, Հայաստանի միջին բրոնզի ժամանակագրությունը և փուլաբաժանումը, թեկն. ատեն. սեղմագիր, Երևան:
4. **Ավետյան Վ.**, 2001, Հին հուշարձաններ Տաթև գյուղի տարածքում, Պատմա-բանասիրական Հանդես 3, 259-264:
5. **Բարխուդարյան Ս.** 1935, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Երևան:
6. **Բարխուդարյան Ս.Գ.** 1967, Վայոց Ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, Դիվան հայ վիճագրության 3, Երևան:
7. **Բարսեղյան Լ.**, 1962, Ուշ բրոնզի մի քանի նորահայտ պաշտամունքային հուշարձաններ, Պատմա Բանասիրական Հանդես, 3, 258-260:
8. **Գայսերյան Վ.**, 1985, Արգիշթե II-ի Սիսիանի արձանագրությունը, Լրաբեր հասարակական գիտությունների 6, 67-79:
9. **Գրիգորյան Գր.**, Վահանավանք, Երևան, 2007:
10. **Եղիազարյան Հ.**, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1955:
11. **Եսայան Ս.**, 1972, Ջանգեզուրի վաղ հնագիտական հուշարձանները, Լրաբեր հասարակական գիտությունների, 4, 64-73:
12. **Լալայան Ե.**, Սիսիան, նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Ազգագրական Հանդես, Գ. Թիֆլիս, 1898, էջ 105-293:
13. **Լալայան Ե.**, Ջանգեզուր, Ազգագրական Հանդես, Դ, Թիֆլիս, 1899, էջ 7-116:
14. **Լալայան Ե.**, Շարուր Դարալագեազի գաւառ, Ազգագրական Հանդես, XII, Թիֆլիս, 1904, 235-293:
15. **Լալայան Ե.**, 1931, Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան:
16. **Լիսիցյան Ս.**, 1965, Ջանգեզուրի հայերը, Երևան:
17. **Խաչատուրյան Վ.**, 1982, Դիտողություններ հայ արվեստի հիմունքների մասին, Լրաբեր հասարակական գիտությունների 10, 76-85:
18. **Խնկիկյան Օ.Ս.**, 1997, Ցլազուլիս կոթողներ Վարդենիսի լեռներից և «վիշապաքարերի» մեկնության հարցի շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների 3, 148-159:
19. **Կարախանյան Գ., Սաֆյան Պ.**, 1970, Սյունիքի ժայռապատկերները, Երևան:
20. **Հասրաթյան Մ.** 1985, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան:
21. **Ղարիբյան Ի., Սիմոնյան Հ., Գնունի Ա., Այվազյան Է., Քամալյան Է., Խաչատրյան Գ.**, 2011, Սյունիքյան նորահայտումներ, Հուշարձան Է, Երևան, էջ 129-142:
22. **Մելքոնյան Ս.**, 2010, 2005-2006 Շաղատ I և III հուշարձանախմբի միջին բրոնզեդարյան բնակատեղիի պեղումների արդյունքներից, Հին Հայաստանի մշակույթը, պր. XIV, 149-154
23. **Շահինյան Ա.**, 1976, Վայոց Ձորի վիշապ-կոթողները, Պատմա-բանասիրական հանդես 1, 286-289:
24. **Շահինյան Ա.**, 1984, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, Երևան:
25. **Պետրոսյան Հ.Լ.**, 2008, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան:
26. **Սամվելյան Խ.**, 1931, Հին Հայաստանի կուլտուրան, հ. I, Երևան:
27. **Սարգսյան Ս.**, Ալիշան, Երևան 1978:
28. **Քալանթարյան Ա., Մելքոնյան Հ.**, 2005, Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ. Երևան:

29. **Н. В. Арутюнян.** , 1985:
30. **А. Ц. Геворкян.** , 1980.
31. **С. Есаян, А. Шагинян.** . 1962 N 3, . 187-200.
32. **С. Есаян** 1981,
33. **С. Есаян, О. Хнкийан,** 1990, , Բանբեր
Երևանի Համալսարանի, 3, 34-44.
34. **А. А. Мартиросян.** 1964,
35. **А. О. Мнацаканян.** 1954, . 54, 99-104.
36. **Мурадян П.М.** 1985, . . (.), , 20-26.
37. **Avetisyan P., Badalyan R., Gevorkyan A., Khnkikyan O.** 2000, The 1998 Excavations Campaign at the Middle Bronze Age Necropolis of Sisian, Armenia, *Studi Micenei ed Egeo-Anatolici* 42/2, 161-173.
38. **P. Avetisyan, Ch. Chatainger, G. Palumbi.**, 2006, The Results of excavations of Nerkin Godedzor (2005-2006). Preliminary Report Aramazd: *Armenian Journal of Near Eastern Studies* 1, 6-18.
39. **Cherry J., Manning S., Alcock S., Tonikyan A., Zardaryan M.** 2007, Radiocarbon Dates for the Second and First Millennia BC from Southern Armenia: Preliminary Results from the Vorotan Project, 2005-2006, *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies* 2, 52-71.
40. **N. Harouthiounian.** 1982, La nouvelle inscription Ourarteene decouverte en Armenie Sovetique. *Gessellschaft und Kultur im alten Vorderasien*. Berlin, 82-85
41. **Kroll St.** 2006, Southern Armenia Survey (Syunik) 2000-2003, *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies* 1, 19-49.
42. **Melkonyan H., Karapetyan I., Yengibaryan N.** The Excavations of the Newly found Urartian Fortress in Getap, Aramazd, 2010: *Armenian Journal of Near Eastern Studies* 5/2, p. 90-98.
43. **Xnkikyan O.S.** *Syunik during the Bronze and Iron Ages*, Barrington, 2002, p.

Հայկ Ավետիսյան, Արսեն Բորոխյան, Արտակ Գնունի, Ուղեգծային հնագիտական այցելություն պատմական Սյունիքի Վայոց Ձորի տարածաշրջան – ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնը իրականացնում է պատմական Սյունիքի բրոնզ-երկաթեդարյան հուշարձանների հետազոտություններին նվիրված ծրագիր: Տվյալ ծրագրի նպատակն է մ.թ.ա. 3500-500 թթ. Սյունիքի մշակութային զարգացման հետազոտումը տարածաշրջանային և միջտարածաշրջանային զարգացումների համատեքստում: Հետազոտության համար աղբյուրագիտական հենք են հանդիսանում ինչպես հնագիտական պեղումների, այնպես էլ հնագիտական հետախուզման և թանգարանային նյութի հետազոտության արդյունքները: 2013 թ. աշնան ընթացքում ԵՊՀ արշավախումբը իրականացրեց հետախուզական աշխատանքներ Վայոց ձորի տարածաշրջանում: Աշխատանքների արդյունքում

հետազոտվեցին ինչպես հայտնի (Ճոճ Տար, Եղեգնաձորի վիշապաքարը, Եղեգնաձորի թանգարանի նյութերը), այնպես էլ նորահայտ (Ելփինի դամբարանադաշտ, Աղավնաձորի ուրարտական ժայռափոր խորշ, Ռինդի վիշապաքարերը) հուշարձաններ: Նշված աշխատանքները ակներև ցուցադրում են Այունիքի ներուժը Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան հուշարձանների հետազոտության համատեքստում:

Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Археологическая маршрутная поездка в Вайоцдзорский регион исторического Сюника –

3500 500

2013 .

(
) ,

.)

Hayk Avetisyan, Arsen Gnuni, Artak Bobokhyan, Archaeological surveys in the territory of Vayots Dzor in Historical Syunik – The Chair of Archaeology and Ethnography of Yerevan State University realizes a project dedicated to investigation of Bronze and Iron Age archaeological sites of Historical Syunik. The aim of the project is to reveal the process of cultural developments in Syunik during the time span from ca. 3500 to 500 BC, to clear up its role in regional and interregional context. The work is based both on excavation results as well as on surveys and works on museum materials. During Autumn 2013 we undertook the first surveys in the territory of Vayots Dzor. As a result of the mentioned works we investigated the materials at the Eghegnadsor Museum, visited already known sites and monuments (such as Choch Tar, vishap/dragon stone of Eghegnadsor) and discovered new ones (cemetery of Elpin, Urartian rock cut niche of Aghavnadsor, two vishap/dragon stones at Rind). Mentioned investigations demonstrate the essential potential which has the region of Vayots Dzor and Syunik on the whole from the point of view of investigation of Bronze and Iron Age realities of Armenia.

*Հայկ Ավետիսյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ
Արսեն Բոբոխյան – պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
Արտակ Գնունի – պատմ. գիտ. թեկնածու*

